

**BERLIN-CHEMIE
MENARINI**
ԹԵՐԹԻԿ-ՆԵՐԴԻՐ՝ ՏԵՂԵԿԱՍՎՈՒԹՅՈՒՆ ՀԻՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ

**Դեքսալգին® սաշետ, 25 մգ, գրանուլներ ներս ընդունելու լուծույթ պատրաստելու համար
Դեքսկետոպրոֆեն**

Սույն դեղամիջոցը կիրառելուց առաջ ուշադիր ընթերցեք տվյալ ներդիր-թերթիկը, քանի որ այն պարունակում է Ձեզ համար կարևոր տեղեկատվություն:

Սույն դեղամիջոցն անհրաժեշտ է միշտ ընդունել տվյալ ներդիր-թերթիկում շարադրված ցուցումներին կամ բուժող բժշկի կամ դեղատան աշխատակցի ցուցումներին խիստ համապատասխան:

- Պահպանեք ներդիր-թերթիկը: Հնարավոր է անհրաժեշտություն առաջանա այն նորից ընթերցել:
- Եթե Ձեզ անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն կամ խորհուրդ, դիմեք դեղատան աշխատակցին:
- Ցանկացած կողմնակի ազդեցության առաջացման դեպքում տեղեկացրեք բուժող բժշկին կամ դեղատան աշխատակցին: Դա վերաբերում է նունիսկ ցանկացած հնարավոր կողմնակի ազդեցության, այդ թվում նրանց, որոնք սույն ներդիր-թերթիկում նկարագրված չեն: Տե՛ս բաժին 4:
- Եթե 3-4 օր հետո չեք ապաքինվում կամ հիվանդության ախտանիշերը խորացել են, դիմեք բժշկի:

Ներդիր-թերթիկի բովանդակությունը՝

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը և ինչի՞ համար է այն օգտագործվում:
2. Ի՞նչ է հարկավոր իմանալ Դեքսալգին® սաշետ դեղամիջոցն ընդունելուց առաջ:
3. Ինչպե՞ս կիրառել Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը:
4. Հնարավոր կողմնակի ազդեցություն:
5. Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի պահպանման պայմանները:
6. Փաթեթի պարունակությունն ու այլ տեղեկատվություն:

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը և ինչի՞ համար է այն օգտագործվում:

Դեքսալգին® սաշետը ցավազրկող, հակաբորբոքային, ջերմիջեցնող միջոց է, որը դասվում է ոչ սթերոիդային հակաբորբոքային միջոցների խմբին (ՈՍՀԲՄ):

Այն օգտագործվում է կարճաժամկետ ախտանիշային բուժման համար թերթիկ միջին աստիճանի ինտենսիվության ցավերի, օրինակ մկանների կամ հոդերի սուր ցավի, ցավոտ դաշտանների (դիսմենորեա), ատամնացավի ժամանակ:

2. Ի՞նչ է հարկավոր իմանալ Դեքսալգին® սաշետ դեղամիջոցն ընդունելուց առաջ:

- Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը չի կարելի կիրառել, եթե՝
- Դուք ունեք ալերգիա դեքսկետոպրոֆենի կամ տվյալ դեղամիջոցի այլ բաղադրիչի նկատմամբ (թվարկված են բաժին 6-ում):

- Դուք ունեք ավերգիա ացետիլսալիցիլաթթվի կամ այլ ոչ սթերոիդ հակաբորբոքային միջոցների նկատմամբ:

- Դուք ունեք ասթմա կամ ացետիլսալիցիլաթթվի կամ այլ ոչ սթերոիդ հակաբորբոքային միջոցների կիրառումից հետո Դուք ունեցել եք ասթմայի նոպաներ, սուր ավերգիկ ռինիտ (քթի լորձաթաղանթի կարճատև բորբոքում), քթային պոլիպներ (քթում այտուցվածություն ավերգիայի պատճառով), եղջնացան (մաշկային ցան), անգիոնևրոտիկ այտուց (դեմքի, աչքերի, շրթունքների կամ լեզվի այտուցվածություն կամ շնչառության խանգարում) կամ կրծքավանդակի խզզոցներ:

- կետոպրոֆեն (ոչ սթերոիդ հակաբորբոքային միջոց) կամ ֆիբրատներ կիրառելու ժամանակ (արյան մեջ ճարպերի կոնցենտրացիայի իջեցման համար օգտագործվող դեղամիջոցներ) Դուք ունեցել եք ֆոտոալերգիկ կամ ֆոտոտոքսիկ ռեակցիաներ (արևի ճառագայթների ազդեցության տակ մաշկի կարմրության հատուկ ձև և/կամ փուչիկների առաջացում),

- Դուք ունեք պեպտիկ խոց/ստամոքսի կամ աղիների արյունահոսություն կամ, եթե Դուք անցյալում ունեցել եք ստամոքսի կամ աղիների արյունահոսություն, խոց կամ պերֆորացիա,

- նախկինում Դուք տառապում եք մարտոդական քրոնիկ խանգարումներով (օրինակ՝ այրոցքներ, անմարսելիություն),

- ցավազրկման նպատակով ոչ սթերոիդ հակաբորբոքային միջոցների կիրառման (ՈՍՀԲՄ) ժամանակ Ձեզ մոտ զարգացել է ստամոքսի կամ աղիների արյունահոսություն կամ ծակում,

- Դուք տառապում եք բորբոքային բնույթի աղիների քրոնիկ հիվանդությամբ (Կրոնի հիվանդություն կամ ոչ սպեցիֆիկ խոցային կոլիտ),

- Դուք ունեք արտահայտված սրտային անբավարարություն, միջին կամ ծանր աստիճանի երիկամների կամ լյարդի ծանր աստիճանի ֆունկցիայի խանգարում,

- Ձեզ մոտ առկա է բարձր արյունահոսականություն կամ արյան մակարդելիության խանգարում,

- Դուք խիստ ջրազրկված եք (օրգանիզմի կողմից հեղուկի մեծ քանակի կորուստ) փսխումների, լուծի կամ օրգանիզմ անբավարար քանակությամբ հեղուկի մուտքի դեպքում,

- Ձեզ մոտ հղիության երրորդ եռամսյակն է կամ Դուք կերակրում եք կրծքով:

Նախազգուշացումներ և նախազգուշական միջոցներ

- Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը կիրառելուց առաջ խորհրդակցեք բուժող բժշկին կամ դեղատան աշխատակցին, եթե՝

- Դուք տառապում եք կամ նախկինում տառապել եք ավերգիայով,

- Դուք տառապում եք կամ տառապել եք երիկամների, լյարդի, սրտի հիվանդություններով (զարկերակային հիպերտենզիա և/կամ սրտային անբավարարություն), օրգանիզմում հեղուկի կանգով,

- Դուք ընդունում եք միզամուղներ և հեղուկի զգալի կորստի հետևանքով Ձեզ մոտ ջրազրկում և արյան ծավալի նվազում է առաջացել (օրինակ միզարտադրության ավելացման, լուծի կամ փսխումների պատճառով),

- Դուք ունեք սրտային հիվանդություններ, Դուք տարել եք ինսուլտ կամ կարծում եք, որ այդ հիվանդությունների ռիսկի խմբի մեջ եք (օրինակ՝ բարձր զարկերակային ճնշման, շաքարային դիաբետի, խոլեստերինի բարձր մակարդակի ու ծխելու դեպքում): Այդ դեպքերում Ձեզ անհրաժեշտ է բուժման հետ կապված խորհրդակցել բժշկի կամ դեղատան աշխատակցի հետ: Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի նման միջոցները կարող են մի փոքր

բարձրացնել սրտային նոպայի (սրտամկանի կաթվածի) կամ ինսուլտի ռիսկը: Ցանկացած բարդությունների վտանգը աճում է չափաբաժնի բարձրացման ու թերապիայի տևողության ավելացման հետ: Մի՛ գերազանցեք նշանակված չափաբաժինը և բուժման տևողությունը:

- Դուք տարեց մարդ եք: Մեծանում է կողմնակի ազդեցությունների առաջացման վտանգը (տե՛ս բաժին 4): Այդ դեպքում անհրաժեշտ է անմիջապես դիմել բժշկի:

- Դուք կին եք, որը տառապում է վերարտադրողական ֆունկցիայի խանգարումով(Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի կիրառման ֆոնի վրա հնարավոր է վերարտադրողական ֆունկցիայի իջեցում, դրա համար այն խորհուրդ չի տրվում կիրառել հղիության պլանավորման կամ համապատասխան զննումների անցկացման ժամանակ):

- Ձեզ մոտ խանգարված է արյունաստեղծումն ու արյան բջիջների ձևավորումը:

- Դուք ունեք համակարգային գայլախտ կամ շարակցական հյուսվածքի խառը հիվանդություն (իմունային համակարգի խանգարումներ, որոնք ուղեկցվում են շարակցական հյուսվածքի փոփոխություններով):

- Դուք տարել եք աղիների բորբոքային բնույթի քրոնիկ հիվանդություն (ոչ սպեցիֆիկ խոցային կոլիտ, Կրոնի հիվանդություն):

- Դուք տառապում եք կամ տառապել եք ստամոքսի կամ աղիների այլ հիվանդություններով:

- Եթե ունեք ինֆեկցիոն հիվանդություն (նայել ստորև <<ինֆեկցիոն հիվանդություններ>>)

- Դուք ընդունում եք այլ դեղամիջոցներ, որոնք բարձրացնում են խոցային հիվանդության կամ արյունահոսությունների զարգացման ռիսկը, օրինակ սթերոիդ դեղամիջոցներ ներընդունման ձևով, որոշ հակադեպրեսանտներ (սերոտոնինի հակադարձ զավթման սելեկտիվ ինհիբիտորների տիպի), թրոմբոցիտների ագրեգացիան խոչընդոտող միջոցներ (ասպիրին), կամ հակակոագուլյանտներ (վարֆարին): Այդ դեպքում Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը կիրառելուց առաջ անհրաժեշտ է խորհրդակցել բժշկի հետ, որը, հնարավոր է կնշանակի լրացուցիչ դեղամիջոցներ՝ ստամոքսը պաշտպանող միջոցներ (օրինակ, միզաբուստոլ կամ ստամոքսահյուսի արտադրությունը ճնշող դեղեր),

- Դուք տառապում եք ասթմայով քրոնիկական ռինիտի, քրոնիկական սինուսիտի և/կամ քթի պոլիպների հետ զուգացվմամբ, հետևաբար, առավել նախատրամադրված եք բարձր ռիսկի ավերգիայի ացետիլսալիցիլաթթվի և/կամ ՈՍՀԲՄ նկատմամբ, քան մնացած բնակչությունը:

Ինֆեկցիոն հիվանդություններ

Դեքսալգին սաշետ դեղամիջոցի ընդունումն ինֆեկցիոն հիվանդությունների ժամանակ կարող է քողարկել ինֆեկցիայի այնպիսի ախտանշաններ ինչպիսին են՝ մարմնի բարձր ջերկությունը և ցավը: Այդպիսով, Դեքսալգին սաշետի ընդունման հետևանքով, հնարավոր է տեղի ունենա ինֆեկցիոն հիվանդության բուժման սկզբի հապաղում, որն էլ իր հերթին կարող է բարձրացնել բարդությունների առաջացման ռիսկը:

Սա նկատվել է պնևմոնիայի ժամանակ, որը եղել է հարուցված բակտերիաներով և մաշկի բակտերիալ ինֆեկցիաներով՝ ջրծաղիկի հետ կապված: Եթե Դուք ընդունում եք նշված դեղամիջոցը և միևնույն ժամանակ Ձեր մոտ առկա է ինֆեկցիոն հիվանդություն , որի դրսևորումներն շարունակում են անհանգստացնել և նույնիսկ խորանալ՝ անհապաղ դիմեք բժշկի:

Երեխաներ և դեռահասներ

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի կիրառման վերաբերյալ հետազոտություններ երեխաների ու դեռահասների մոտ չեն անցկացվել: Այդ պատճառով նրա անվտանգությունն ու արդյունավետությունը հաստատված չեն և երեխաների ու դեռահասների մոտ տվյալ միջոցը կիրառել հարկավոր չէ:

Այլ դեղամիջոցներ և Դեքսալգին® սաշետը

Եթե այժմ Դուք ընդունում եք կամ վերջերս ընդունել եք կամ կարող էիք ընդունած լինել ցանկացած այլ դեղամիջոցներ, այդ թվում առանց դեղատոմսի բաց թողնվող, հայտնեք դրա մասին բուժող բժշկին կամ դեղատան աշխատակցին: Գոյություն ունեն դեղամիջոցներ, որոնք չի կարելի համադրել միմյանց հետ, կան նաև այնպիսիները, որոնց համատեղ կիրառման դեպքում անհրաժեշտ իրագործել դեղաչափի շտկում:

Եթե Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի հետ միասին Դուք ընդունում կամ ստանում եք ստորև թվարկված դեղամիջոցներից որևէ մեկը, պարտադիր հայտնեք դրա մասին բուժող բժշկին, ատամնաբույժին կամ դեղատան աշխատակցին:

Դեքսալգին սաշետ դեղամիջոցի հետ խորհուրդ չի տրվում համադրել հետևյալ դեղամիջոցները՝

- Ացետիլսալիցիլաթթու , կորտիկոսթերոիդներ և այլ հակաբորբոքային միջոցներ,
- Վարֆարին, հեպարին և արյան մակարդելիությանը խոչընդոտող այլ դեղամիջոցներ,
- Լիթիում, որն օգտագործվում է տրամադրության որոշ խանգարումների դեպքում,
- Մետոտրեքսատ (հակաքաղցկեղային դեղամիջոց կամ իմունոդեպրեսանտ), որը օգտագործվում է բարձր դոզաներով (15 մգ/շաբաթական),
- Էպիլեպսիայի ժամանակ կիրառվող գիդանտոիններ և ֆենիտոին,
- Բակտերիալ վարակների բուժման համար կիրառվող սուլֆամետոքսազոլ:

Դեքսալգին սաշետ դեղամիջոցի հետ համատեղ հետևյալ դեղամիջոցների համադրումները խորհուրդ է տրվում կիրառել զգուշությամբ՝

- ԱՊՖ ինհիբիտորներ, միզամուղ միջոցներ և անգիոտենզին II անտագոնիստներ, որոնք օգտագործվում են բարձր զարկերակային ճնշման ու սրտային հիվանդությունների ժամանակ,
- Պենտոքսիֆիլին և օքսպենտիֆիլին, որոնք օգտագործվում են քրոնիկական խոցերի ժամանակ, որոնք պայմանավորված են երակների հիվանդություններով:
- Զիդովուդին, որն օգտագործվում է վիրուսային վարակների բուժման ժամանակ,
- Հակաբիոտիկներ-ամինոգլիկոզիդներ, որոնք կիրառվում են բակտերիալ վարակների բուժման համար,
- Սուլֆանիլմիզաթթվի ածանցյալներ (օր՝ քլորպրոպամիդ և գլիբենկլամիդ), որոնք օգտագործվում են շաքարային դիաբետի բուժման համար,
- Մետոտրեքսան ցածր՝ շաբաթական 15 մգ քիչ դոզաներով:

Հետևյալ միջոցների համատեղ կիրառումը պետք է լինի լավ հիմնավորված՝

- Խինոլոնային շարքի հակաբիոտիկներ (օրինակ՝ ցիպրոֆլոքսացին, լևոֆլոքսացին), որոնք կիրառվում են բակտերիալ վարակների բուժման համար,

- Ցիկլոսպորին կամ տակրոլիմուս, որոնք կիրառվում են համակարգային իմունային հիվանդությունների բուժման և օրգանների փոխպատվաստման ժամանակ,
- Ստրեպտոկինազա և այլ թրոմբոլիտիկ կամ ֆիբրինոլիտիկ դեղամիջոցներ, արյան մակարդուկների քայքայման համար կիրառվող դեղամիջոցներ,
- Հոդատապի (պոդագրայի) ժամանակ կիրառվող պրոբենեցիդ,
- Քրոնիկական սրտային անբավարարության համար օգտագործվող դիգոքսին,
- Աբորտի հանգեցնող միֆեպրիստոն (հղիության ընդհատման համար),
- Սերոտոնինի հակադարձ զավթման սելեկտիվ ինհիբիտորների տիպի հակադեպրեսանտներ ,
- Թրոմբոցիտների ագրեգացիան ու արյան մակարդուկների առաջացումը նվազեցնող հակաագրեգանտներ,
- Բետա-բլոկատորներ, որոնք օգտագործվում են բարձրացած զարկերակային ճնշման ու սրտի հիվանդությունների ժամանակ:
- Տենոֆովիր, դեֆերազիրոքս, պեմետրեքսեդ

Եթե ունեք որևէ հարցեր Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի վերաբերյալ խորհրդակցեք բուժող բժշկի կամ դեղատան աշխատակցի հետ:

Մանրի ու ըմպելիքների հետ Դեքսալգին® սաշետի ընդունումը

Սուր ցավերի դեպքում դեղամիջոցն անհրաժեշտ է ընդունել սոված, այսինքն ուտելուց նվազագույնը 15 րոպե առաջ, որպեսզի այն ավելի արագ ազդի:

Հղիություն, կրծքով կերակրում և վերաբնակարանային ֆունկցիա

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի կիրառումը հղիության վերջին երեք ամսվա ընթացքում և կրծքով կերակրելու ժամանակահատվածում հակացուցված է:

Հղիության և կրծքով կերակրելու դեպքում, ինչպես նաև հնարավոր կամ պլանավորվող հղիության դեպքում տվյալ դեղամիջոցն ընդունելուց առաջ խորհրդակցեք բժշկի կամ դեղատան աշխատակցի հետ, քանի որ հնարավոր է Դեքսալգին սաշետը Ձեզ հարմար չէ:

Պետք է խուսափել Դեքսալգին սաշետի կիրառումից կանանց մոտ, որոնք պլանավորում են հղիություն կամ հղի կանանց մոտ: Հղիության ցանկացած ժամկետում բուժումը պետք է անցկացնել միայն բժշկի նշանակման համապատասխան:

Օրհուրդ չի տրվում Դեքսալգին սաշետի կիրառումը կանանց մոտ, որոնք պլանավորում են հղիություն, կամ բուժվում են չբերության առիթով:

Կանանց մոտ ֆերտիլության պոտենցիալ ազդեցության վերաբերյալ, տե՛ս բաժին 2-ը՝ «Նախազգուշացումներ և նախազգուշական միջոցներ»:

Ազդեցություն տրանսպորտային միջոցների կառավարման և մեխանիզմների սպասարկման ունակության վրա

Քանի որ Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի կիրառման ֆոնի վրա կարող են առաջանալ այնպիսի կողմնակի երևույթներ, ինչպիսին են խլության զգացում և քնկոտություն, ինչպես նաև տեսողության խանգարումներ, այն կարող է մի փոքր ազդել տրանսպորտային միջոցների կառավարման ու մեխանիզմների սպասարկման ունակության վրա:

Գլխապտույտի կամ քնկոտության դեպքում խուսափեք տրանսպորտային միջոցներ վարելուց և մեխանիզմներ սպասարկելուց, քանի դեռ այդ ախտանիշերը չեն վերանա: Խորհրդակցեք բժշկի հետ:

Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի մեջ պարունակվում է սախարոզա

Եթե Ձեզ մոտ հայտնաբերված է եղել շաքարի որևէ տեսակների անտանելիություն, սվյալ դեղամիջոցն ընդունելուց առաջ խորհրդակցեք Ձեր բուժող բժշկի հետ:

դեղամիջոցում պարունակվում է 2.41 գ սախարոզա: Դա անհրաժեշտ է ի գիտություն ընդունել շաքարային դիաբետով հիվանդներին:

3. Ինչպե՞ս ընդունել Դեքսալգին® սաշետը

Տվյալ դեղամիջոցը միշտ հարկավոր է ընդունել սույն ներդիր-թերթիկում շարադրված հրահանգին, կամ բժշկի կամ դեղատան աշխատակցի հրահանգների խիստ համապատասխան:

Ախտանշանների թեթևացման համար խորհուրդ է տրվում կիրառել դեղամիջոցի նվազագույն արդյունավետ դեղաչափ հնարավորինս կարճ ժամանակահատվածում: Եթե Ձեր մոտ ինֆեկցիոն հիվանդություն է և ախտանշանները (բարձր ջերմություն և ցավ) պահպանվում են կամ խորանում են՝ անհապաղ դիմեք բժշկի(բաժին 2):

18 տարեկանից բարձր մեծահասակներ

Խորհուրդ է տրվում ընդունել 1 փաթեթ (25 մգ) 8 ժամ հետո, բայց ոչ ավելի քան 3 փաթեթ (75 մգ) օրական:

Եթե բուժումը սկսելուց 3-4 օր հետո Դուք ձեզ ավելի լավ չեք զգում կամ ավելի վատ եք, խորհրդակցեք բուժող բժշկի մոտ: Դեքսալգին® սաշետի դեղամիջոցի Ձեզ անհրաժեշտ դեղաչափը կախված է ցավի տեսակից, արտահայտվածությունից և տևողությունից:

Եթե Դուք տարիքով եք կամ տառապում եք երիկամների կամ լյարդի հիվանդություններով, սկսեք բուժումը օրական 2 փաթեթ դեղաչափից (50 մգ):

Դեքսալգին® սաշետի լավ տանելիության դեպքում տարեց հիվանդների համար սկզբնական դեղաչափը կարելի է հետագայում ավելացնել մինչև սովորական դեղաչափը (75 մգ դեքսկետոպրոֆեն):

Եթե Դուք տառապում եք ուժեղ ցավերից և ցանկանում եք այն թեթևացնել, ընդունեք դեղամիջոցը սոված (նվազագույնը ուտելուց 15 րոպե առաջ), քանի որ այդ ժամանակ այն ավելի արագ է ներծծվում (տե՛ս բաժին 2 «Դեքսալգին® սաշետի ընդունումը սննդի և ըմպելիքների հետ»):

Տվյալ դեղամիջոցը խորհուրդ չի տրվում օգտագործել երեխաներին և մինչև 18 տարեկան դեռահասներին:

Դեղամիջոցի ճիշտ կիրառման հրահանգներ

Լուծեք փաթեթի ամբողջ պարունակությունը մի բաժակ ջրում, լավ խառնեք ավելի լավ լուծման համար:

Այդ լուծույթը անհրաժեշտ է ընդունել պատրաստելուց անմիջապես հետո:

Ի՞նչ անել Դեքսալգին® սաշետի գերդոզավորման դեպքում

Դեղամիջոցի գերդոզավորման դեպքում դիմեք բժշկի, դեղատան աշխատակցի կամ մոտակա հիվանդանոցի ընդունարան: Մի՛ մոռացեք Ձեզ հետ վերցնել դեղամիջոցի փաթեթը կամ ներդիր-թերթիկը:

Եթե մոռացել եք ընդունել Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը

Մի ընդունեք կրկնակի դեղաչափ բաց թողնվածը հատուցելու համար: Նշված ժամին ուղղակի ընդունեք հաջորդ նշանակված դոզան («Ինչպես ընդունել Դեքսալգին® սաշետ դեղամիջոցը» բաժին 3-ին համապատասխան):

Եթե Ձեր մոտ առաջանան հարցեր դեղամիջոցի կիրառման վերաբերյալ խորհրդակցեք բուժող բժշկի կամ դեղատան աշխատակցի հետ:

4. Հնարավոր կողմնակի ազդեցություններ

Ինչպես և բոլոր դեղամիջոցները, սովյալ դեղամիջոցը նույնպես կարող է առաջացնել կողմնակի ազդեցություն, չնայած ոչ բոլորի մոտ: Հնարավոր կողմնակի ազդեցությունները թվարկված են կախված դրանց առաջացման հաճախականությունից: Քանի որ ցուցակը մասնակի հիմնված է Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի կիրառման ժամանակ նշված կողմնակի երևույթների վրա, իսկ գրանուլները ներծծվում են ավելի արագ, քան հաբերը, հնարավոր է, որ կողմնակի երևույթների փաստացի հաճախականությունը (աղեստամոքսային տրակտի կողմից) Դեքսալգին® սաշետի գրանուլների ձևով կիրառման ժամանակ ավելի բարձր լինի:

Հաճախ առաջացող կողմնակի երևույթներ, կարող են ի հայտ գալ 10 հիվանդից 1 մոտ

Սրտխառնոց և/կամ փսխում, ցավ որովայնի վերին հատվածում, լուծ, մարսողության խանգարում (դիսպեպսիա):

Երբեմն առաջացող կողմնակի երևույթներ, կարող են ի հայտ գալ 100 հիվանդից 1 մոտ

Գլխապտույտ (վերտիգո), պտտման զգացողություն, քնկոտություն, քնի խանգարում, նյարդայնություն, գլխացավեր, սրտխփոցի զգացում, արյան առեռումներ, ստամոքսի լորձաթաղանթի բորբոքում (գաստրիտ), փորկապություն, բերանի չորություն, մետեորիզմ, մաշկի ցան, բարձրացած հոգնածություն, ցավ, տենդ, ընդհանուր ինքնազգացողության վատացում:

Հազվադեպ առաջացող Կողմնակի երևույթներ, կարող են ի հայտ գալ 1000 հիվանդից 1 մոտ

Պեպտիկ խոց, ծակած խոց կամ արյունահոսություն, որը կարող է ի հայտ գալ արյունով փսխոցի կամ սև կղանքի տեսքով, ուշաթափություն, բարձր զարկերակային ճնշում, շնչառության հաճախականության նվազում, հեղուկի կանգ, ծայրամասային այտուցներ (օրինակ՝ սրունքների), կոկորդի այտուց, ախորժակի կորուստ (անոռեքսիա), կողմնակի զգացողություններ, քորվող ցան, ակնե, գերքրտարտադրություն, մեջքի ցավեր, հաճախակի միզարձակում, դաշտանացիկի խանգարում, շագանակագեղձի խանգարումներ, լյարդային ցուցանիշների շեղումներ (արյան անալիզ), լյարդի բջիջների վնասում (հեպատիտ), սուր երիկամային անբավարարություն:

Շատ հազվադեպ, կարող են ի հայտ գալ 10000 հիվանդից 1 մոտ

Անաֆիլակտիկ ռեակցիաներ (բարձր զգայունության ռեակցիա անգամ մինչև շոկ), մաշկի, բերանի, աչքերի և սեռական օրգանների լորձաթաղանթի չլավացող վերքեր

(Մթիվենս-Ջոնսի և Լայելլի համախտանիշ), դեմքի կամ շրթունքների ու կոկորդի այտուցվածություն (անգիոնևրոտիկ այտուց), դժվարացած շնչառություն շնչուղիների նեղացման արդյունքում (բրոնխոսպազմ), հևոց, հաճախացած սրտխփոց, զարկերակային ճնշման նվազում, ենթաստամոքսային գեղձի բորբոքում, տեսողության անհստակություն, ականջներում աղմուկ (տիննիտուս), մաշկի գերզգայնություն, լույսի նկատմամբ զգայնություն, քոր, երիկամային խանգարումներ: Լեյկոցիտների քանակի նվազում (նեյտրոպենիա), արյան թրոմբոցիտների նվազած քանակ (թրոմբոցիտոպենիա):

Եթե բուժման սկզբում Ձեզ մոտ առաջացել են կողմնակի երևույթներ ԱՍՀ կողմից (օրինակ ցավ ստամոքսում, այրոցք կամ այրունահոսություն), եթե Դուք անցյալում արդեն ունեցել եք այդ ախտանիշերը հակաբորբոքային միջոցների երկարատև կիրառման դեպքում և հատկապես եթե Դուք տարիքով եք անհապաղ հայտնեք դրա մասին բժշկին:

Մաշկի ցանի, կամ բերանի կամ հեշտոցի լորձաթաղանթի ցանկացած այլ վնասման կամ պերզիայի ցանկացած նշանի դեպքում Դեքսալգին® սաշետի ընդունումը պետք է դադարեցնել:

Ըստ առկա տվյալների ոչ սթերոիդ հակաբորբոքային միջոցների կիրառման ժամանակ օրգանիզմում հեղուկի կանգի հետևանքով հնարավոր է այտուցների առաջացում (հատկապես ոտքերի), զարկերակային ճնշման բարձրացում և սրտային անբավարարություն:

Դեքսալգին® սաշետի նման միջոցները կարող են մի փոքր բարձրացնել սրտի նոպայի (սրտամկանի կաթված) կամ ցերեբրովասկուլյար խանգարումների (ինսուլտ) առաջացման ռիսկը:

Հիվանդների մոտ, որոնք տառապում են շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններով (համակարգային գայլախտ կամ շարակցական հյուսվածքի խառը հիվանդություն) հակաբորբոքային դեղամիջոցների կիրառման ֆոնի վրա, հազվադեպ դեպքերում հնարավոր է առաջանան գլխացավեր, տենդ, պարանոցի թմրածության զգացողություն:

Առավել հաճախ դիտվում են կողմնակի երևույթներ ադեստամոքսային տրակտի կողմից:

Կարող է զարգանալ պեպտիկ խոց, թափածակում կամ ադեստամոքսային արյունահոսություն, երբեմն մահացու էլքով, հատկապես տարեց հիվանդների մոտ:

Կան հաղորդումներ դեղամիջոցն ընդունելուց հետո սրտխառնոցի, փսխման, լուծի, մետեորիզմի, փորկապության, դիսպեպսիայի, որովայնի ցավերի, մելենայի, արյունով փսխոցի, խոցային ստոմատիտի, կոլիտի սրման և Կրոնի հիվանդության առաջացման մասին (տե՛ս բաժին 2.4): Ավելի հազվադեպ առաջանում է ստամոքսի լորձաթաղանթի բորբոքում (գաստրիտ):

Ինչպես և մյուս ՈՍՀԲՄ դեպքում, հնարավոր են ռեակցիաներ արյան կողմից (պուրպուրա, ապլաստիկ և հեմոլիտիկ անեմիա, հազվադեպ ազրանուլոցիտոզ և ոսկրածուծի հիպոպլազիա):

Հաղորդումներ կողմնակի երևույթների մասին

Ցանկացած կողմնակի ազդեցության առաջացման դեպքում դրա մասին հայտնեք ձեր բուժող բժշկին կամ դեղատան աշխատակցին: Դա վերաբերում է ցանկացած հնարավոր կողմնակի ազդեցությանը, այդ թվում նաև նրանց, որոնք նկարագրված չեն սույն ներդիր-թերթիկում:

Հայտնելով կողմնակի ազդեցության մասին, Դուք կարող եք օգնել հավաքել ավելի շատ տեղեկություններ տվյալ դեղամիջոցի անվտանգության մասին:

5. Դեքսալգին® սաշետ դեղամիջոցի պահպանման պայմանները

Պահպանել երեխաներից հեռու տեղում:

Դեղամիջոցը չօգտագործել փաթեթի կամ ծալած ստվարաթղթե տուփի վրա «Պիտանի է մինչև» բառերից հետո նշված պիտանիության ժամկետը լրանալուց հետո: Պիտանիության ժամկետը վերաբերում է նշված ամսվա վերջին օրվան:

Տվյալ դեղամիջոցը չի պահանջում պահպանման հատուկ պայմաններ:

Ոչ մի դեղամիջոց մի՛ թափեք կոյուղու կամ կենցաղային աղբի մեջ: Ձեզ չպետքական դեղամիջոցի օգտահանման վերաբերյալ խորհրդակցեք դեղատան աշխատակցի հետ: Այդ միջոցառումները նպաստում են շրջակա միջավայրի պաշտպանությանը:

6. Փաթեթի պարունակությունն ու այլ տեղեկատվություն

Դեքսալգին® սաշետի դեղամիջոցի փաթեթի պարունակությունը

Ազդող նյութը հանդիսանում է Դեքսկետոպրոֆենը՝ դեքսկետոպրոֆենի տրոմետամոլի տեսքով:

Մի փաթեթում պարունակվում է 25 մգ դեքսկետոպրոֆեն :

Ուղեկցող նյութեր՝ ամոնիումի գլիցիրիլհինատ, նեոգեսպերիդին դիհիդրոխալկոն, ինտոլինային դեղին (E104), կիտրոնի բուրավետիչ և սախարոզա

(նայել բաժին 2) : Դեքսալգին սաշետում պարունակվում սախարոզա:

Դեքսալգին® սաշետի արտաքին տեսքը և փաթեթի պարունակությունը՝

Փաթեթները պարունակում են կիտրոնի դեղին գույնի գրանուլներ:

Դեքսալգին® սաշետ 25 մգ դեղամիջոցը արտադրվում է 10, 20, 30 գ փաթեթներով:

Վաճառքում կարող են հանդիպել ոչ բոլոր չափերի փաթեթներ:

Գրանցված վկայականի սեփականատերը՝

Մենարինի Ինտերնեշնլ Օպերեյշնզ Լյուքսեմբուրգ Ս. Ա.

ավելյու դե լա Գար

1611 Լյուքսեմբուրգ

Լյուքսեմբուրգ

Լիազոր ներկայացուցիչ՝

Բեռլին-Խեմի ԱԳ

Գլինիկեր Վեգ 125

12489 Բեռլին

Գերմանիա

Տվյալ ներդիր-թերթիկի վերջին խմբագրության ամսաթիվը՝ 03/2021 թ.: